ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՍՏՂԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԳՄ -ՄԱԱՊՁԲ-25/24 -2

ք. Գավառ 09 ապրիլի 2025թ

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմը, ի դեմս գլխավոր քարտուղար Ս. Մանուկյանի, որը գործում է ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մյուս կողմից, և «Ագաթ Գրուպ» ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն Վ. Թադևոսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

AnyScanner

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքը անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

AnyScanner

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 2138500 (երկու միլիոն հարյուր երեսունութ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 2-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում19.1:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետը սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

AnyScanner

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև. ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի

կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջ
վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստան
Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի
վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրություններ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ	«Ագաթ Գրուպ» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7	ք. Գավառ Բոշանյան 4
Բանկ՝ ՀՀ Ֆին. Նախ. գործառնական վարչ	Հ/Հ220098532413000
Հ/Հ 900171002919	ՀՎՀՀ00894242
ՀՎՀՀ 08428824	«Ակբա Բանկ» ԲԲԸ
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի Գլխավոր քարտուղար՝ Ա.Մանուկյան	Վ.Թադևոսյան
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն Կ.Տ.

« 09 ապրիլ 2025 թ. կ

ՀՀ ԳՄ -ՄԱԱՊՁԲ-25/24 -2 ծածկագրով պայմանագ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ապրանք								մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	Միավորի գինը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	Ժամկետը**
1	39221260/1	Ափսեթեյի	Սպասքը պետք է պատրաստված լինի հակաալերգիկ և էկոլոգիապես մաքուր նյութից: Ափսե սպիտակ կերամիկական ծաղիկով, տեսքը՝ շրջանաձև, տարողությունը ոչ պակաս 150 գրամից: Արտաքին տրամագիծը 150-180մմ հիմքի տրամագիծը 90-110մմ: Ափսեների փաթեթավորումը նախատեսված համապատասխան փաթեթավորման թղթով: Գույները և չափերը համաձայնացնել պատվիրատուի հետ.Տեղափոխումը և բեռնաթափումը մատակարարի հաշվին:	Հատ	350	50400	144	ՀՀ Գեղարքունիքի մարզ Մարտունի համայնք	Պայմանագրի կնքման օրվանից հաշված 5 օրացուցային օր հետո
2	39221260/2	Խորը ափսե ճաշի	Սպասքը պետք է պատրաստված լինի հակաալերգիկ և էկոլոգիապես մաքուր նյութից: Ափսե կերամիկական, տեսքը՝ շրջանաձև, տարողությունը ոչ պակաս 500 գրամից: Արտաքին տրամագիշը 180մմ: Ափսեների փաթեթավորումը	Հատ	380	54720	144	ՀՀ Գեղարքունիքի մարզ Մարտունի համայնքի	Պայմանագրի կնքման օրվանից հաշված 5 օրացուցային

		ռասա ր	նախատեսված համապատասխան փաթեթավորման թղթով: Գույները և չափերը համաձայնացնել պատվիրատուի հետ:Տեղափոխումը և բեռնաթափումը մատակարարի հաշվին:					Ծովասարի. Զորագյուղի. Գեղհովիտի մանկապար տեզներ	
3	39221260/ 3	Ափսե միջին չափսի	Սպասքը պետք է պատրաստված լինի հակալերգիկ և էկոլոգիապես մաքուր նյութից: Ափսե կերամիկական, տեսքը՝ շրջանաձև, տարողությունը ոչ պակաս 250 գրամից: Արտաքին տրամագիծը 200մմ, հիմքի տրամագիծը 13մմ: Ափսեների փաթեթավորումը նախատեսված համապատասխան փաթեթավորման թղթով: Գույները և չափերը համաձայնացնել պատվիրատուի հետ:Տեղափոխումը և բեռնաթափումը մատակարարի հաշվին	Հատ	400	57600	144	ՀՀ Գեղարքունի քի մարզ Մարտունի համայնքի Վարդենիկի. Ծովասարի. Զորագյուղի. Գեղհովիտի մանկապար տեզներ	Պայմանագր ի կնքման օրվանից հաշված 5 օրացուցայի ն օր հետո
4	39221130/ 1	Գավա թներ	ՀՀ Կառավարության 2006 թ/ նոյեմբերի 16-ի N 1750-Ն որոշման հաստատված "Խեցեգործական ամանեղենի վերաբերյալ տեխնիկական կանոնակարգի", ԳՕՍՏ 17151-81, ԳՕՍՏ 28973-91 և ԳՕՍՏ 27002-2020-ի չափորոշիչներին համապատասխան: գավաթը պետք է պատրաստված լինի հակաալերգիկ և էկոլոգիապես մաքուր նյութերից: Տարողությունը 150-180մլ, բռնակով: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված: Տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է մատակարարը: Գույները և չափերը համաձայնացնել պատվիրատուի հետ :	Հատ	380	54720	144	ՀՀ Գեղարքունի քի մարզ Մարտունի համայնքի Վարդենիկի. Ծովասարի. Զորագյուղի. Գեղհովիտի մանկապար տեզներ	Պայմանագր ի կնքման օրվանից հաշված 5 օրացուցայի ն օր հետո
14	39221100/ 1	Հարիչ ձեռքի	Հարիչ ձեռքի մետաղական, 10-15 սմ, սննդային չժանգոտվող պողպատից, ԳՕՍՏ 17151-81 և ԳՕՍՏ 27002-2020-Ի չափանիշներին համապատասխան: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված:Տեղափոխումը և բեռնաթափումը մատակարարի հաշվին: Գույները և չափերը համաձայնացնել պատվիրատուի հետ :	Հատ	290	870	3	ՀՀ Գեղարքունի քի մարզ Մարտունի համայնքի Վարդենիկի. Ծովասարի. Զորագյուղի. Գեղհովիտի մանկապար տեզներ	Պայմանագր ի կնքման օրվանից հաշված 5 օրացուցայի ն օր հետո
16	39241120/ 1	Խոհա նոցայ ին դանա կներ	Դանակներ Խոհարարական դանակներ -հավաքածու 5հատ՝ 1. մսի դանակ 2. հացի դանակ 3.բանջարեղենի դանակ 4. մրգի դանակ 5. կաթնամթերքի դանակ:Դանակի կտրող մասի երկարությունը ոչ պակաս 12 սմ-ից: Սննդային չժանգոտվող պողպատից: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված:Տեղափոխումը և բեռնաթափումը մատակարարի հաշվին: Գույները և չափերը	Հավաք ածու	7000	14000	2	ՀՀ Գեղարքունի քի մարզ Մարտունի համայնքի Վարդենիկի. Ծովասարի. Զորագյուղի. Գեղհովիտի	Պայմանագր ի կնքման օրվանից հաշված 5 օրացուցայի ն օր հետո

AnyScanner SCAN

			համաձայնացնել պատվիրատուի հետ :					տեղներ	
18	39711200/1	Խառնիչներ	Բահիկներ մետաղյա, սննդային չժանգոտվող պողպատից, ԳՕՍՏ 17151-81 և ԳՕՍՏ 27002-2020-ի չափանիշներին համապատասխան: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված:Տեղափոխումը և բեռնաթափումը մատակարարի հաշվին: Գույները և չափերը համաձայնացնել պատվիրատուի հետ :	Հատ	1050	2100	2	ՀՀ Գեղարքունիքի մարզ Մարտունի համայնքի Վարդենիկի, Ծովասարի, Զորագյուղի, Գեղհովիտի մանկապարտեզներ	Պայմանագրի կնքման օրվանից հաշված 5 օրացուցային ն օր հետո
19	39221230/3	Կարտոֆիլի ճզմիչ	Կարտոֆիլի ճզմիչ մետաղյա, անցքերով, սննդային չժանգոտվող պողպատից, ԳՕՍՏ 17151-81 և ԳՕՍՏ 27002-2020-ի չափանիշներին համապատասխան: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված:Տեղափոխումը և բեռնաթափումը մատակարարի հաշվին: Գույները և չափերը համաձայնացնել պատվիրատուի հետ :	Հատ	350	700	2	ՀՀ Գեղարքունիքի մարզ Մարտունի համայնքի Վարդենիկի, Ծովասարի, Զորագյուղի, Գեղհովիտի մանկապարտեզներ	Պայմանագրի կնքման օրվանից հաշված 5 օրացուցային ն օր հետո
21	39221230/5	Չափիչ բաժակ բաժնե չափով	Չափիչ բաժակ 0.5լ, պլաստիկ կամ սննդային չժանգոտվող պողպատից, ԳՕՍՏ 17151-81 և ԳՕՍՏ 27002-2020-ի չափանիշներին համապատասխան: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված:Տեղափոխումը և բեռնաթափումը մատակարարի հաշվին: Գույները ն չափերը համաձայնացնել պատվիրատուի հետ :	Հատ	390	390	1	ՀՀ Գեղարքունիքի մարզ Մարտունի համայնքի Վարդենիկի, Ծովասարի, Զորագյուղի, Գեղհովիտի մանկապարտեզներ	Պայմանագրի կնքման օրվանից հաշված 5 օրացուցային ն օր հետո
22	44119000/1	Սնունդ կտրատելու տախտակ՝ փայտյա	փայտյա խոհանոցային տախտակներ չափը 400x250 մմ, ԳՕՍՏ 17151-81 և ԳՕՍՏ 27002-2020-ի չափորոշիչներին համապատասխան: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված:Տեղափոխումը և բեռնաթափումը մատակարարի հաշվին: Գույները և չափերը համաձայնացնել պատվիրատուի հետ :	Հատ	1200	10800	9	ՀՀ Գեղարքունիքի մարզ Մարտունի համայնքի Վարդենիկի, Ծովասարի, Զորագյուղի, Գեղհովիտի մանկապարտեզներ	Պայմանագրի կնքման օրվանից հաշված 5 օրացուցային ն օր հետո
23	39221290/1	Թեյնիկներ	Ներժից թեյնիկ 6 լ տարողությամբ, կափարիչով, պլաստմասե բռնակով : Ապրանքը պետք է լինի նոր,	Հատ	3000	9000	3	ՀՀ Գեղարքունիքի մարզ	Պայմանագրի կնքման օրվանից

			չօգտագործված:Տեղափոխումը և բեռնաթափումը մատակարարի հաշվին: Գույները և չափերը համաձայնացնել պատվիրատուի հետ :					համայնքի Վարդենիկի. Ծովասարի. Չորաքյուղի. Գեղհովիտի մանկապարտեզներ	
24	39141200/1	Ներքնակ	ՀՀ ԿԳ նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 18-ի N 858-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Մահճակալի ներքնակի չափերն են՝ 140x70x10սմ (ԼxԵxԲ):Երեսի կտորը՝ 100% բամբակյա, լցոնված պարունակությունը՝ 100% մշակված բուրդ կամ բժշկական բամբակ: Գույնը և չափսերը նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված:Տեղափոխումը և բեռնաթափումը մատակարարի հաշվին	հատ	5900	849600	144	ՀՀ Գեղարքունիքի մարզ Մարտունի համայնքի Վարդենիկի. Ծովասարի. Չորաքյուղի. Գեղհովիտի մանկապարտեզներ	Պայմանագրի կնքման օրվանից հաշված 5 օրացուցային օր հետո
25	39511100/1	Վերմակ	բամբակյա փափուկ վերմակ՝ 110 x 140x 5 սմ(Լ x Ե x Բ) սմ: Կտորը՝ 100% բամբակյա, լցոնված պարունակությունը՝ 100% Բամբակ:Չքրտնեցնող է, հակաալերգիկ և էկոլոգիապես մաքուր հումքից: 30°C ջերմաստիճանում լվացվող: Գույնը և չափսերը նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ:+/- 10%: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված:Տեղափոխումը և բեռնաթափումը մատակարարի հաշվին	Հատ	5000	720000	144	ՀՀ Գեղարքունիքի մարզ Մարտունի համայնքի Վարդենիկի. Ծովասարի. Չորաքյուղի. Գեղհովիտի մանկապարտեզներ	Պայմանագրի կնքման օրվանից հաշված 5 օրացուցային օր հետո
28	39516122/1	Բարձ	ՀՀ ԿԳ նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 18-ի N 858-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Բամբակյա փափուկ բարձ՝35x50 սմ Կտորը՝ 100% բամբակյա, լցոնված պարունակությունը՝ 100% բամբակ քաշը 400գ:Գույնը և չափսերը նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ:+/- 10%: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված:Տեղափոխումը և բեռնաթափումը մատակարարի հաշվին	Հատ	2100	302400	144	ՀՀ Գեղարքունիքի մարզ Մարտունի համայնքի Վարդենիկի. Ծովասարի. Չորաքյուղի. Գեղհովիտի մանկապարտեզներ	Պայմանագրի կնքման օրվանից հաշված 5 օրացուցային օր հետո
30	18111100/1	Անձնակազմի համար	Բամբակյա, չթից, հումքը մաքուր բամբակե մանրաթելերից, որը բարակ է, դիմացկուն, շնչող և փափուկ գործվածքից, խտությունը՝ 180գ/մ2 : Գլխին կապվող: Չափսերը՝ (60-65) x (65-75) (Լ x Ե): Սպիտակ կամ կամ տարբեր գույների, ծաղկավոր: Լվանալ 30°C ջերմաստիճանում:		1400	11200	8	ՀՀ Գեղարքունիքի մարզ Մարտունի համայնքի Վարդենիկի. Ծովասարի. Չորաքյուղի.	Պայմանագրի կնքման օրվանից հաշված 5 օրացուցային օր հետո

AnyScanner SCAN

		գլխաշորեր	Փույսը, ասը և չոգեսելը սպասարկում համաձայնեցնել մանկապարտեզի տնօրինության հետ: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված:Տեղափոխումը և բեռնաթափումը մատակարարի հաշվին					մանկապարտեզի տնօրեն

ԳՆՈՐԴ

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
աշխատակազմ
Հասցեն՝ ք. Գավառ, Կենտրոնական
հրապարակ 7
Բանկ՝ ՀՀ Ֆին. Նախ. գործառնական
վարչ
Հ/Հ 900171002919
ՀՎՀՀ 08428824
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
աշխատակազմի
Գլխավոր քարտուղար՝
Ս. Մանուկյան՝

/ստորագրություն/

ՎԱՃԱՌՈՂ

««Ագաթ Գրուպ» ՍՊԸ
ք. Գավառ Բոշանյան 4
Հ/Հ220098532413000
ՀՎՀՀ00894242
«Ակբա Բանկ» ԲԲԸ
Վ. Թումանյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված
« 09 ապրիլ 2025 »
09.04.2025թ կնքված
ծածկագրով պայմանագրի

ՀՀ ԳՄ -ՄԱԱՊՁԲ-25/24 -2

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	անվանումը	«ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Աստղաձորի Մսուր մանկապարտեզի կարիքների համար անկողնային ծածկոցների ձեռքբերում դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	Նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1,2,3,4,14,16,18,19,21,22, 23,24,25,28,30	«ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Աստղաձորի Մսուր մանկապարտեզի կարիքների համար ապրանքների ձեռքբերում	0	0	0	2138500	2138500	2138500	2138500	2138500	2138500	2138500	2138500	2138500	2138500

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ
Հասցեն՝ ք. Գավառ, Կենտրոնական
հրապարակ 7
Բանկ՝ ՀՀ Ֆին. Նախ. գործառնական վարչ
Հ/Հ 900171002919
ՀՎՀՀ 08428824
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
աշխատակազմի
Գլխավոր քարտուղար
Ս. Մատևոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Ագաթ Գրուպ» ՍՊԸ
Ք. Գավառ Բոշանյան 4
Հ/Հ220098532413000
ՀՎՀՀ00894242
«Ակբա Բանկ» ԲԲԸ
Վ. Թադևոսյան

/ստորագրություն
Կ.Տ